



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 37

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ Ջրառատ համայնքի անագանին որոշում է:

1. Հաստատել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 15-ի հերթական նիստի օրակարգը

Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույթաչափերը սահմանելու մասին

Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ավագանու 2021 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին

Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին

Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույթաչափերը հաստատելու մասին

Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՋԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

ՄԿՐՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՄԵԼԵՈՆՅԱՆ ԳՍԵՆԻԿ

ՍԱԼՏԻՑՅԱՆ ՀԱԿՈՒԲ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 38-Ն

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների դրույթներով՝ *Ջրառատ համայնքի ավագանին որոշում է.*

1. Սահմանել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույթաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնուն պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:


Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԲԱՂԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ 

ԶԱՔԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ 

ՄԿՐՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ 

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ 

ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈՒԲ 



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ



Հավելված
Հրատարակության ավագանու
2020 թվականի դեկտեմբերի
15-ի N 38-Ն որոշման

**ՋՐԱՌԱՍ ՀԱՍՏԱՅԼՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15 000 /տասնհինգ հազար/ դրամ,

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ,

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ,

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1 500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1 500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

